Հայաստանում աղքատության հաղթահարման գործիք

poverty stoplight

Աղքատության 6 չափումները.

1. Եկամուտ և զբաղվածություն
2. Առողջություն և միջավայր
3. Բնակարանային պայմաններ և ենթակառուցվածքներ
4. Կրթություն և մշակույթ
5. Կազմակերպվածություն և մասնակցություն
6. Ինքնագիտակցում և մոտիվացիա

Նպատակ, խնդիր, անհատական, խմբային

Ի՞նչ է աղքատության ցուցանիշը:

Յուրաքանչյուր ցուցանիշ սահմանում է, թե ի՞նչ է նշանակում լինել «ոչ աղքատ»:

Յուրաքանչյուր ցուցանիշ օգտագործում է պարզ պատկերներ և սահմանումներ, որոնց միջոցով ընտանիքի անդամը կարող է որոշել իր ընտանիքի իրավիճակի խոցելիությունը:

ծայրահեղ աղքատ - կարմիր

աղքատ - դեղին

ոչ աղքատ - կանաչ

Եկամուտ և զբաղվածություն

7 ցուցանիշ

- Ընտանիքի հիմնական ծախսեր
- Վարկեր
- Անձի նույնականացում
- Եկամուտների բազմազանություն
- Ընտանեկան խնայողություններ
- Միգրանտ աշխատողներ
- Կայուն եկամուտ

Ցուցանիշ 1: **Ընտանիքի հիմնական ծախսեր**	**Կատեգորիա:** **Հայեցակարգային չափանիշ**	**Չափում:** **Եկամուտ և զբաղվածություն**

<u>Սահմանում:</u> Ազգային Վիճակագրական Ծառայությունը (NSS) պնդում է, որ Հայաստանում աղքատությունը սահմանվում է ավելի շատ սպառման (ծախսեր), քան եկամտի մակարդակով: Ընտանիքը համարվում է աղքատ, եթե ամսական եկամուտը պակաս է նվազագույն սպառողական զամբյուղի միջին ամսեկան արժեքից՝ 54,414 դրամ: Նվազագույն սպառողական զամբյուղը սահմանված է որպես նվազագույն գումար, որն անհրաժեշտ է մարդուն պարենային և ոչ պարենային ապրանքներ ձեռք բերելու և իր առողջության և ամենօրյա կարիքների հոգալու համար: Նվազագույն սպառողական զամբյուղի արժեքի հիման վրա որոշվում են աղքատության երեք մակարդակները՝ վերին, ստորին և ծայրահեղ աղքատություն:

Սպառման վերին մակարդակ: 1 անձի համար ամսական ծախսվում է նվազագույնը՝ 54,500դ:

Սպառման ստորին մակարդակ: 1 անձի համար ամսական ծախսվում է՝ 24,000 - 54,500դ:

Ծայրահեղ աղքատություն: 1 անձի համար ամսական ծախսվում է 24,000դ-ից քիչ գումար:

<u>Հիմնավորում:</u> Սպառման մակարդակը որոշում է, թե արդյո՞ք ընտանիքը կարող է հոգալ իր հիմնական կարիքները.

Կանաչ: Իմ ընտանիքի սպառման մակարդակը վերին սահմանում է:	**Դեղին:** Իմ ընտանիքի սպառման մակարդակը ստորին սահմանում է:	**Կարմիր:** Իմ ընտանիքի սպառման մակարդակը ծայրահեղ աղքատությունն է:

Ցուցանիշ 2: **Վարկեր**	**Կատեգորիա:** **Հայեցակարգային չափանիշ**	**Չափում:** **Եկամուտ և զբաղվածություն**

<u>Սահմանում</u>: Վարկեր կարող են վերցնել ցանկացած հավատարմագրված բանկից կամ վարկային կազմակերպությունից: Հավատարմագրված բանկերն կիրառում են անձի տվյալների և նախորդ վարկային պատմությունների ստուգման մեթոդներ, որպեսզի որոշեն արդյո՞ք անհատը կկարողանա կատարել շարունակական վճարումները: Վարկային կազմակերպությունները չեն ստուգում տվյալները և տրամադրում են բարձր տոկոսադրույքով վարկեր: Որոշ տարածված վարկային կազմակերպություններից են ԱԿԲԱ լիզինգը, Կրեդիտ կորպը, Էքսպրես կրեդիտը և Ֆաստ կրեդիտը:

<u>Հիմնավորում:</u> Վարկերը կարևոր նշանակություն ունեն ընտանիքին տրվող հնարավորությունների տեսանկյունից՝ բնակարան, փոխադրամիջոց ձեռքբերելու և այլ խոշոր գնումներ կատարելու նպատակով: Սակայն, եթե հետևենք վարկային անհաջող պրակտիկային, ապա դա կարող է ընտանիքին հանգեցնել աղքատության վիճակի:

Կանաչ: Մեր ընտանիքում չունենք չմարված վարկեր կամ ունենք չմարված վարկ հավատարմագրված բանկում և ժամանակին կատարում ենք անհրաժեշտ վճարումները:	**Դեղին:** Մեր ընտանիքում ունենք չմարված վարկ հավատարմագրված բանկից, սակայն մենք ուշացնում ենք վճարումները:	**Կարմիր:** Մեր ընտանիքում ունենք բարձր տոկոսադրույքով վարկեր և ուշացնում ենք դրանց վճարումները:

Ցուցանիշ 3: **Անձի նույնականացում**	**Կատեգորիա:** **Հայեցակարգային ցուցանիշ**	**Չափում:** **Եկամուտ և զբաղվածություն**
<u>Սահմանում</u>: Ընտանիքի յուրաքանչյուր անդամ ունի պատշաճ փաստաթղթավորում, եթե նրա անձը հաստատող փաստաթուղթը վավեր է: Լինել վավեր նշանակում է, որ նրա ժամկետը չի վերջացել և կարող է օգտագործվել իրավական նույնականացման նպատակով կամ այլ հարցերում:		
<u>Հիմնավորում</u>: Անձի նույնականացումը կարևոր է բոլոր իրավական ծառայությունների համար, ներառյալ ֆինանսական ռեսուրսների մատչելիությունը, քվեարկությունը և պետական սոցիալական ծառայությունների տրամադրումը կախված են դրանից:		
Կանաչ: Իմ ընտանիքի բոլոր անդամներն ունեն անձը հաստատող վավեր փաստաթուղթ, որի ժամկետն ուժի մեջ է: Անհրաժեշտության դեպքում ես կարող եմ ներկայացնել իմ անձը հաստատող փաստաթուղթը(վարորդական իրավունքը, ծննդյան վկայականը):	**Դեղին**: Իմ ընտանիքի անդամները դժվարություններ ունեն անձը հաստատող փաստաթղթերի ձեռքբերման հարցում կամ նրանց փաստաթղթերի ժամկետը լրացել է: Մենք ակտիվորեն փորձում ենք լուծել այդ խնդիրը:	**Կարմիր**: Իմ ընտանիքի անդամները չունեն անձը հաստատող որևէ փաստաթուղթ՝ տեղեկատվության պակասի կամ անբավարար միջոցների պատճառով:

Ցուցանիշ 4: **Եկամտի բազմազանություն**	**Կատեգորիա:** **Առաջարկվող ցուցանիշ**	**Չափում:** **Եկամուտ և զբաղվածություն**
<u>Սահմանում</u>: Ընտանիքի եկամտի աղբյուրների դիվերսիֆիկացիան նշանակում է, որ այն գոյանում է ընտանիքի մի քանի անդամի եկամուտից: Տնային տնտեսությունը կարող է ունենալ եկամտի տարբերակված աղբյուրներ, եթե նրանք չեն կրում եկամտի մեծ կորուստներ և կարող են կարճ ժամանակում վերականգնել անսպասելի ֆինանսական կորուստները, քանի որ տնային տնտեսությունը կախված չէ եկամտի միայն մեկ աղբյուրից:		
<u>Հիմնավորում</u>: Եկամտի բազմազան աղբյուրները և / կամ կայուն աշխատանքն անհրաժեշտ են ընտանիքի հիմնական կարիքների բավարարման շարունակականությունն ապահովելու համար:		
Կանաչ: Մեր ընտանիքի անդամներից առնվազն երկուսն ունեն աշխատանք, որն ապահովում է ընտանիքի եկամուտը, կամ ընտանիքում մեկ անձ է աշխատում, ով ունի կայուն աշխատանք:	**Դեղին:** Մեր ընտանիքում միայն մեկ անձ է աշխատում, որն ապահովում է ընտանիքի եկամուտը, բայց այդ աշխատանքը կայուն չէ կամ եկամտի երկրորդ աղբյուրը վստահելի չէ:	**Կարմիր:** Մեր ընտանիքում ոչ մեկը չունի աշխատանք, որը կապահովի ընտանիքի եկամուտը կամ եկամտի միակ աղբյուրն անվստահելի է: Մենք չունենք եկամտի կայուն աղբյուր:

Ցուցանիշ 5: **Ընտանեկան խնայողություններ**	**Կատեգորիա:** **Առաջարկվող ցուցանիշ**	**Չափում:** **Եկամուտ և զբաղվածություն**
<u>Սահմանում</u>: *Ընտանեկան խնայողությունները* սահմանվում են որպես ընտանիքի եկամտի մի մաս, որոնք չեն ծախսվում, այլ պահվում են և որպես ավանդ են դրվում օրինական ֆինանսական հաստատությանը պատկանող բանկային հաշվում՝ ապագայի կամ անկանխատեսելի կարիքների բավարարման համար:		
<u>Հիմնավորում</u>: Խնայելու ունակությունը կյանքի կարևոր բաղադրիչ է, որն ապահովագրում է ընտանիքին արտակարգ կամ անկանխատեսելի դեպքերի պարագայում ունենալ սեփական ֆինանսական աջակցության աղբյուր:		
Կանաչ: Մեր ընտանիքում կանոնավոր խնայողություններ ենք կատարում և ունենք բավարար հնարավորություններ արտակարգ/անսպասելի իրավիճակների համար (առնվազն 3 ամիս էական ծախսեր կատարելու համար)	**Դեղին:** Մեր ընտանիքում ունենք որոշակի խնայողություններ, բայց մենք ակտիվորեն չենք խնայում:	**Կարմիր:** Մեր ընտանիքում երբեք խնայողություններ չենք կատարում և չունենք գումար անկանխատեսելի իրավիճակների համար:

Ցուցանիշ 6: **Միգրանտ աշխատողներ**	**Կատեգորիա:** **Առաջարկվող ցուցանիշ**	**Չափում:** **Եկամուտ և զբաղվածություն**
<u>Սահմանում</u>: Միգրանտ աշխատողը նա է, ով թողնում է երկիրը աշխատանք գտնելու նպատակով: Միգրանտ աշխատողները սովորաբար ընտանիքի եկամտի միակ աղբյուրն են: Միգրանտ աշխատողը մտադիր չէ մշտապես մնալ այն երկրում կամ տարածաշրջանում, որտեղ աշխատում է:		
<u>Հիմնավորում</u>: Եթե աշխատանքի հնարավորություն չկա, ապա ընտանիքի անդամները (հիմնականում հայրը) պետք է գտնի եկամուտ ստեղծելու այլընտրանքային տարբերակ: Միգրանտ աշխատողները լքում են իրենց երկիրը, որպեսզի ապահովեն իրենց ընտանիքին, սակայն երբեմն ընտանիքին ուղղված եկամուտը դադարում է: Սա նշանակում է, որ մայրը միայնակ պետք է հնարավորություն գտնի ընտանիքն ապահովելու առանց որևէ աջակցության:		
Կանաչ: Իմ ընտանիքում չկա անդամ, ով աշխատում է այլ երկրում կամ կա ինչ-որ մեկը, ով աշխատում է այլ երկրում և կանոնավոր գումար է ուղարկում:	**Դեղին:** Իմ ընտանիքում կա անդամ, ով աշխատում է այլ երկրում, սակայն կանոնավոր կերպով չի գումար ուղարկում:	**Կարմիր:** Իմ ընտանիքում կա այլ երկրում աշխատող անդամ, սակայն ընդհանրապես գումար չի ուղարկում:

Ցուցանիշ 7: **Կայուն եկամուտ**	**Կատեգորիա:** **Առաջարկվող ցուցանիշ**	**Չափում:** **Եկամուտ և զբաղվածություն**
<u>Սահմանում</u>: Տնային տնտեսության եկամուտը կայուն է վերջին 6 ամիսների ընթացքում:		
<u>Հիմնավորում</u>: Եկամտի կայունությունը կարևոր է ընտանիքի բարեկեցության, երկարատև պլանավորման և ֆինանսական կայունության պահպանման համար, հետևաբար եկամուտը չպետք է յուրաքանչյուր ամիս փոփոխության ենթարկվի:		
Կանաչ: Տնային տնտեսության եկամուտը կայուն է եղել վերջին 6 ամիսների ընթացքում	**Դեղին:** Տնային տնտեսության եկամուտը չնչին չափով է տատանվել, և էական փոփոխությունների չի ենթարկվել վերջին 6 ամիսների ընթացքում	**Կարմիր:** Տնային տնտեսության եկամուտն անընդհատ տատանվել է և դժվարեցրել դրա կառավարման վերաբերյալ նախնական պլանավորումը:

Առողջություն և միջավայր

12 ցուցանիշ

- Խմելու մաքուր ջուր
- Սննդարար սնունդ
- Առողջապահական ծառայությունների հասանելիություն
- Աղբահանություն
- Ատամների առողջություն
- Ակնաբուժություն
- Ապահովագրություն
- Հոգեկան առողջություն
- Անձնական հիգիենա
- Սեռական առողջություն
- Մաքուր միջավայր
- Պատվաստումներ

Ցուցանիշ 8: **Խմելու մաքուր ջուր**	**Կատեգորիա:** **Հիմնական Ցուցանիշ**	**Չափում:** **Առողջություն և միջավայր**
Սահմանում: Խմելու ջրից օգտվելու հնարավորությունն՝ այն է, երբ ընտանիքի անդամներն ունեն խմելու ջրի հիմնական աղբյուր, որը կարող են օգտագործել կենցաղային նպատակներով կամ անձնական հիգիենայի համար, ինչպես նաև խմելու և սնունդ պատրաստելու համար՝ առանց հիվանդություններով վարակվելու ռիսկի:		
Հիմնավորում: Խմելու ջուրն անհրաժեշտ պայման է ընտանիքի առողջության համար, և ջրի հեշտ ու մշտական առկայությունը կարևոր է արժանապատիվ կյանքի համար:		
Կանաչ: Մեր ընտանիքը հասանելիություն ունի մաքուր ջրին: Մեր ջուրը չի կտրվում, և մենք չենք մտահոգվում ջրի որակի մասին:	**Դեղին:** Մեր ընտանիքի համար մաքուր ջուրը դժվար հասանելի է, այն հաճախ կտրվում է: Մենք փոխարենը շշալցված ջուր ենք գնում:	**Կարմիր:** Մեր տան ջուրը կտրված է, մեր ծորակի ջուրը մաքուր չէ կամ մենք պետք է գնենք մաքուր ջուր: Մենք չենք կարող գնել շշալցված ջուր:

Ցուցանիշ 9: **Սննդարար սնունդ**	**Կատեգորիա:** **Հիմնական Ցուցանիշ**	**Չափում:** **Առողջություն և միջավայր**
<u>Սահմանում</u>: Առողջ սննդակարգը կազմված է կալորիական և ոչ կալորիական սննդից, որն անհրաժեշտ է մարդու օրգանիզմն առողջ պահելու համար:		
<u>Հիմնավորում</u>: Առողջ սնունդը կարևոր է առողջ ապրելակերպի և լավ ինքնքազգացողության համար:		
Կանաչ: Մեր ընտանիքը ունի հավասարակշռված դիետա, որը ներառում է մրգեր, բանջարեղեն, միս, ձավարեղեն եւ կաթնամթերք:	**Դեղին:** Մեր ընտանիքը հավասարակշռված դիետա ունի, պարբերաբար զբաղվելով մրգերով, բանջարեղենով եւ հացահատիկներով: Միս եւ կաթնամթերք հաճախ պարունակվում են մեր դիետայում:	**Կարմիր:** Մեր ընտանիքը չի օգտագործում պտուղները, բանջարեղենը, կաթնամթերքը եւ մսի պարունակությունը:

Ցուցանիշ 10: **Առողջապահական ծառայությունների հասանելիություն**	**Կատեգորիա:** **Հայեցակարգային ցուցանիշ**	**Չափում:** **Առողջություն և միջավայր**
<u>Սահմանում:</u> Առողջապահական ծառայություններից օգտվելու հնարավորությունը կարող է որոշվել ընտանիքի անդամների՝ որակյալ ծառայություններից օգտվելու հնարավորությամբ (ֆիզիկապես և տնտեսապես): Դա իր մեջ ներառում է առողջապահական հիմնական ծառայությունները, մասնագիտացված ծառայությունները, անհետաձգելի (շտապ) օգնությունը, դեղերի վաճառքը և ընդհանուր բժշկությունը:		
<u>Հիմնավորում:</u> Բժշկական հաստատություն մուտք գործելու հնարավորությունն անհրաժեշտ է, որպեսզի ընտանիքի բոլոր անդամները լինեն առողջ և առանց անհրաժեշտ խնամքի կամ բուժման չմնան:		
Կանաչ: Մեր ընտանիքում բոլորս անհրաժեշտության դեպքում հնարավորություն ունենք բարձորակ բժշկական ծառայություններ ստանալու, քանի որ մենք վճարում ենք մեր այցերի համար:	**Դեղին:** Մեր ընտանիքում անհրաժեշտության դեպքում մենք միայն երբեմն կարող ենք ստանալ բարձորակ բժշկական ծառայություններ, քանի որ մենք մշտապես չենք կարող վճարել դրա համար:	**Կարմիր:** Մեր ընտանիքում մենք երբեք հնարավորություն չունենք ստանալու բարձորակ բժշկական ծառայություններ ծախսերի կամ տրանսպորտային սահմանափակումների պատճառով: Ես ընտրում եմ ինքնաբուժումը, երբ հիվանդ եմ:

Ցուցանիշ 11: **Աղբահանում**	**Կատեգորիա:** **Հայեցակարգային ցուցանիշ**	**Չափում:** **Առողջություն և Միջավայր**
<u>Սահմանում՝:</u> Աղբահանումն իրականացվում է, երբ ընտանիքը պատշաճ կերպով ազատվում է աղբից, լինի դա՝ •աղբի տեղադրումը այնպիսի վայրերում՝ աղբամաններում, որտեղից հնարավոր է հեշտ աղբահանում կատարել, աղբը տեղափոփելով հատուկ նախատեսված վայրեր, աղբանոցներ •տնային տնտեսություններում աղբի ճիշտ ուտիլիզացիան:		
<u>Հիմնավորում:</u> Եթե աղբահանությունը տեղի չի ունենում պատշաճ կերպով, այն կարող է ստեղծել հակասանիտարական և ռիսկային միջավայր:		
Կանաչ: Աղբահանության ծառայությունը տեղափոխում է իմ ընտանիքի և համայնքի աղբը:	**Դեղին:** Երբեմն Աղբահանության ծառայությունը չի տեղափոխում աղբը և հանրային աղբամանների մոտ առաջանում են կույտեր:	**Կարմիր:** Մեր համայնքում ոչ ոք չի գալիս աղբը հավաքելու և արդեն իսկ ստեղծված կույտերը բավականին երկար ժամանակ մնում են նույն տեղում:

Ցուցանիշ 12: **Ատամների առողջություն**	**Կատեգորիա:** **Առաջարկվող ցուցանիշ**	**Չափում:** **Առողջություն և Միջավայր**
<u>Սահմանում:</u> Ընտանիքը գիտակցում է ատամների առողջության կարևորությունը և առողջ է պահում դրանք:		
<u>Հիմնավորում:</u> Ատամների վատ վիճակը կարող է առաջացնել բերանի խոռոչի հիվանդություններ, որոնք առաջանում են ինֆեկիցաների, բորբոքված լնդերի և այլ պատճառներով: Այս հիվանդությունները սահմանափակում են մարդու կծելու, ժպտալու և խոսելու հնարավորությունները և կարող են ազդել հոգեկան առողջության վրա:		
Կանաչ: Մեր ընտանիք անդամներից ոչ մեկը չունի ատամների առողջության խնդիր և այցելում է ատամնաբույժի յուրաքանչյուր վեց ամիսը մեկ անգամ: Բոլորս հասկանում ենք բերանի խոռոչի հիգիենայի կարևորությունը և գրանցված ենք ատամնաբույժի մոտ:	**Դեղին:** Իմ ընտանիքի անդամներից մեկը վերջին 3 տարվա ընթացքում ոչ մի անգամ չի այցելել ատամնաբույժի, քանի որ մենք չենք կարող դա թույլ տալ մեզ կամ էլ դա մեզ համար այդքան էլ կարևոր չէ:	**Կարմիր:** Իմ ընտանիքի անդամներից մեկն ունի ատամների հետ խնդիրներ և չի կարող կամ չգիտի ինչպես լուծել դրանք:

Ցուցանիշ 13: **Ակնաբուժություն**	**Կատեգորիա:** **Առաջարկվող ցուցանիշ**	**Չափում:** **Առողջություն և Միջավայր**
Սահմանում: Ընտանիքը հասկանում է ակնաբուժության կարեւորությունը, հասանելիությունը և գիտի, թե ինչպես օգտվել դրանից:		
Հիմնավորում: Ակնաբուժությունը կարեւոր է կանխարգելելու տեսողության հետ կապված ցանկացած հիվանդություն: Ընդհանուր առմամբ, երբ աչքերի առողջությունը խաթարվում է, որոշ ախտանշաններ կարող են առաջանալ, ինչպիսիք են՝ մշուշոտ տեսողությունը, աչքերի քորը, ցավը, կոպի բորբոքումը, այրումը, դեղնավուն կամ կանաչավուն արտադրությունը կամ այլ տեսակի աչքի վարակներ:		
Կանաչ: Մեր ընտանիքի անդամները ոչ մեկը չունի աչքերի/տեսողության հետ կապված խնդիր, բացի այդ առնվազն 2 տարին մեկ անգամ մենք ակնաբույժի մոտ զննություն ենք անցնում:	**Դեղին:** Մեր ընտանիքի անդամներից մեկն ունի խնդիրներ տեսողության հետ և չի այցելել ակնաբույժի վերջին 3 տարիների ընթացքում: Երբեմն մենք ակնաբույժի այցելելու փոխարեն օգտվում ենք համայնքում առկա անվճար ծառայությունից:	**Կարմիր:** Մեր ընտանիքի անդամներից մեկը 5 տարուց ավելի չի այցելել ակնաբույժի, բայց դրա կարիքն ունի: Նա պետք է կրի ակնոց, բայց չի կարող իրեն թույլ տալ, կամ չգիտի, թե ուր դիմել աջակցության համար:

Ցուցանիշ 14: **Ապահովագրություն**	**Կատեգորիա:** **Առաջարկվող ցուցանիշ**	**Չափում:** **Առողջություն և Միջավայր**
<u>Սահմանում</u>: Ապահովագրությունը ենթադրում է, որ ընտանիքը հնարավորություն ունի ֆորմալ բժշկական ապահովագրության եւ առնվազն մեկ լրացուցիչ ապահովագրության, որը պաշտպանում է նրան ևս մեկ հանգամանքից: Ապահովագրության տեսակներից են՝բժշկական ապահովագրություն, բնակարանի ապահովագրություն, գործազրկության ապահովագրություն, ջրհեղեղից ապահովագրություն, հրդեհից ապահովագրություն, բերքի ապահովագրություն, ավտոապահովագրության եւ այլն:		
<u>Հիմնավորում</u>: Ապահովագրությունը կարեւոր է, քանի որ սպառողները կարող են պաշտպանել իրենց ընտանիքը անսպասելի պատահարից եւ նյութական վնասներից (օրինակ `ավտոմեքենա): Պաշտպանությունը սովորաբար փողի տեսքով է եւ պաշտպանում է պարտավորություններից, վնասներից եւ ֆինանսական կորուստներից:		
Կանաչ: Ես ունեմ ապահովագրության բոլոր անհրաժեշտ ձեւերը (բժշկական, ավտոմեքենայի, տան) եւ պարբերաբար վճարում եմ դրանց դիմաց:	**Դեղին:** Նշվածներից մենք ունենք միայն մեկ-երկու տեսակի ապահովագրություն. բժշկական, ավտոմեքենայի, բնակարանի:	**Կարմիր:** Մենք չունենք որևէ տեսակի ապահովագրություն կամ չգիտենք, թե դա ի՞նչ է

Ցուցանիշ 15: **Հոգեկան առողջություն**	**Կատեգորիա:** **Առաջարկվող ցուցանիշ**	**Չափում:** **Առողջություն և Միջավայր**
<u>Սահմանում:</u> Հոգեկան առողջությունը որոշվում է անձի հոգեբանական եւ հուզակի բարեկեցության մակարդակով: Ընտանիքը կարող է բացահայտել հոգեկան առողջության խնդիրը, հասկանալ հոգեկան վիճակի բուժման կարեւորությունը եւ անհրաժեշտության դեպքում դիմել բուժման:		
<u>Հիմնավորում</u>: Հոգեկան առողջությունը կարեւոր է կյանքի բոլոր փուլերում, մանկությունից եւ պատանեկությունից մինչեւ հասունություն: Այն ազդեցություն է ունենում մարդկանց մտածողության, զգացողության եւ գործունեության վրա, ինչպես նաև օգնում է որոշել, թե ինչպես են մարդիկ դուրս գալիս սթրեսից, վերաբերվում ուրիշներին և որոշում կայացնում:		
Կանաչ: Իմ ընտանիքում մարդիկ հոգեկան առողջության խնդիրներ չունեն կամ, եթե ունեն են, դրանք բավարար չափով բուժվում են դեղորայքի եւ թերապիայի միջոցով:	**Դեղին:** Իմ ընտանիքում մարդիկ հոգեկան առողջության խնդիրներ ունեն եւ բուժում են ստանում, սակայն դա բավարար չէ: Օրինակ. ստանում են դեղորայք, բայց նաեւ անհրաժեշտություն կա թերապևտիկ միջամտության:	**Կարմիր**: Իմ ընտանիքում կա հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձ, սակայն որեւէ կերպ իրավիճակի չի բարելավվում, քանի որ ծախսերը, այդ թվում տեղափոխման բավարար չեն, ինչպես նաև կա հասարակության կողմից պիտակավորում է և այլն:

Ցուցանիշ 16: **Անձնական հիգիենա**	**Կատեգորիա:** **Առաջարկվող ցուցանիշ**	**Չափում:** **Առողջություն և Միջավայր**
<u>Սահմանում</u>: Անձնական հիգիենան առողջության գրավականներից մեկն է, օրինակ զուգարանից օգտվելուց հետո ձեռքերը լվանալը, կամ մինչև ճաշելը կամ ճաշ պատրաստելը, ամեն օր ցնցուղ ընդունելը և ատամները լվանալը:		
<u>Հիմնավորում</u>: Անձնական հիգիենան ճիշտ պահելը կնվազեցնի առողջական խնդիրները, ինչպիսիք են՝ վարակիչ հիվանդությունները և, ընդհանրապես, նաև տհաճ հոտը:		
Կանաչ: Մենք պահում ենք անձնական հիգիենայի բարձր մակարդակ (լվանում ենք ձեռքերը, հաճախակի լողանում ենք, ամեն օր լվանում ենք ատամները):	**Դեղին:** Երբեմն մենք չենք կարող ցնցուղ ընդունել և ոչ բոլորն են լվանում իրենց ձեռքերը և ատամները ամեն օր:	**Կարմիր.** Մեր տանը ոչ բոլորն են պահպանում անձնական հիգիենան: Երբեմն մենք չենք կարողանում մեզ թույլ տալ գնել հիգիենայի պարագաներ (օճառ, շամպուն, ատամի մածուկ, խոզանակ):

Ցուցանիշ 17: **Սեռական առողջություն**	**Կատեգորիա:** **Առաջարկվող ցուցանիշ**	**Չափում:** **Առողջություն և Միջավայր**
<u>Սահմանում:</u> <u>Սեռական առողջությունը սահմանվում է որպես ընտանիքի սեռահասուն անդամների կողմից հոգատարություն սեփական սեռական կյանքի նկատմամբ: Նրանք իրականացնում են ընտանիքի պլանավորում, գինեկոլոգի կոնսուլտացիայի կարիք ունեցող կանայք տեղյակ են և այցելում են գինեկոլոգի առնվազն վերջին 12 ամսվա մեջ մեկ անգամ և հղիության ընթացքում անցնում են բոլոր պարտադիր զննումները: Ընտանիքի հասուն անդամները հետևում են իրենց սեռական առողջությանը:</u>		
<u>Հիմնավորում:</u> <u>Սեռական առողջությունը կարևոր է ընտանիքում վերարտադրությունը կարգավորելու համար, քանի որ մեծ ընտանիքները սովորաբար ունենում են ավելի շատ ֆինանսական միջոցների կարիք: Նաև այս կերպ կարելի է կանխարգելել սեռավարակները և քաղցկեղը:</u>		
Կանաչ: Իմ ընտանիքի անդամները տեղյակ են ինչպես օգտագործել հակաբեղմնավորիչներ և խուսափել սեռավարակներից: Հասուն կանայք այցելում են գինեկոլոգի:	**Դեղին:** Իմ ընտանիքի անդամներից ոմանք չգիտեն ինչպես օգտագործել հակաբեղմնավորիչներ և խուսափել սեռավարակներից, կամ գիտեն, բայց ռիսկի են դիմում: Հասուն կանայք այցելում են գինեկոլոգի միայն եթե կարիք կա:	**Կարմիր:** Իմ ընտանիքի անդամները կարող են ունենալ չբուժված սեռավարակներ: Հասուն կանայք չեն այցելում գինեկոլոգի, ոմանք չգիտեն ինչպես օգտագործել հակաբեղմնավորիչներ և խուսափել սեռավարակներից:

Ցուցանիշ 18: **Աղտոտված միջավայր**	**Կատեգորիա:** **Առաջարկվող ցուցանիշ**	**Չափում:** **Առողջություն և Միջավայր**
Սահմանում: Աղտոտված է այն միջավայրը, որտեղ օդը աղտոտված չէ, փոշի և կեղտ չկա, չկան անխնամ բակեր, ինչպես նաև անասնապահությունը, արդյունաբերական թափոնները (հանքաարդյունաբերական կամ քաղաքային աղբը), թունաքիմիկատները և այլ ագրոքիմիական թափոններ:		
Հիմնավորում՝ Աղտոտված միջավայրը ոչ միայն կարող է տհաճ լինել, այլև վտանգավոր՝ ընտանիքի առողջության համար, և կարող է ստեղծել ռիսկային միջավայր:		
Կանաչ: Իմ բնակավայրը զերծ է ցանկացած տեսակի աղտոտումից, բակերը խնամված են, օդը՝ մաքուր:	**Դեղին:** Իմ բնակավայրը մեծ մասամբ մաքուր է, բայց ոչ միշտ է օդի որակն այնպիսին, ինչպիսին պետք է լինի:	**Կարմիր:** իմ բնակավայրում, մենք զգում ենք, որ միջավայրն աղտոտված է (փոշի, կեղտ, օդի վատ որակ) և դա վտանգում է մեր առողջությունը կամ արդեն ազդում է դրա վրա:

Ցուցանիշ 19: **Պատվաստումներ**	**Կատեգորիա:** **Առաջարկվող ցուցանիշ**	**Չափում:** **Առողջություն և Միջավայր**

<u>Սահմանում:</u> Ըստ Առողջապահության համաշխարհային կազմակերպության՝ մարդ պետք է ստանա որոշակի պարտադիր պատվաստումներ: Ահա դրանց հերթականությունը՝ ըստ տարիքի.

ա) մինչև 6 ամսական երեխաներ. ԲՑԺ, Հեպատիտ Բ1, Հեպատիտ Բ2, ԱԿԴՓ1, պոլիոմելիտ 1,ԱԿԴՓ2 պոլիոմելիտ2, ԱԿԴՓ3, պոլիոմելիտ3, հեպատիտ Բ3, հնգավալենտ (դիֆտերիա, փայտացում և այլն), ռոտավիրուս և այլն:

բ)մինչև 4 տարեկան երեխաները՝ ԿԿԽ, փայտացում և պոլիոմելիտ

գ) 10 տարեկանից բարձր երեխաները, դեռահասները, մեծահասակները ԱԴՓ, մենինգոկոկալ պատվաստում, ՄՄՌ պատվաստում, պնեվմոկոկալ պատվաստում, կապույտ հազ, հեպատիտ A և տուլարեմիայի դեմ պատվաստում:

<u>Հիմնավորում</u>: Պատվաստումները կարեւոր են ձեր ընտանիքի առողջ կյանքը ապահովելու համար: Մանկուց երեխաները պատվաստվելով ձեռք են բերում դիմադրողականություն կյանքին սպառնացող հնարավոր հիվանդությունների դեմ:

Կանաչ: Իմ ընտանիքում բոլորն էլ ժամանակին ստանում են բոլոր անհրաժեշտ պատվաստումները: Մենք լավ տեղեկացված ենք դրանց առավելությունների մասին:	**Դեղին**: Իմ ընտանիքում մենք ունենք մի քանի պատվաստումների կարիք, կամ մենք որոշել ենք չպատվաստվել:	**Կարմիր**: Իմ ընտանիքում կան մարդիկ, ովքեր չեն պատվաստվել, կամ նույնիսկ մենք տեղյակ չենք նրանք պատվաստել են, թե ոչ:

Բնակարանային պայմաններ և ենթակառուցվածքներ

12 ցուցանիշ

- Հեռախոսի հասանելիություն
- Սարքավորումներ
- Խոհանոցային սարքավորումներ
- Էլեկտրաէներգիա, գազ
- Բնակարանի անվտանգության ապահովում
- Ջրամատակարարում և ջրահեռացում
- Համայնքի անվտանգություն
- Առանձնացված ննջասենյակներ
- Համապատասխան հագուստ
- Բնակարանի հարմարավետություն
- Կանոնավոր կերպով գործող տրանսպորտ
- Կայուն բնակատեղի

Ցուցանիշ 20: **Հեռախոսի հասանելիություն**	**Կատեգորիա:** **Հիմնական Ցուցանիշ**	**Չափում:** **Բնակարանային պայմաններ և ենթակառուցվածքներ**
<u>Սահմանում</u>: Հեռախոսի հասանելիությունը ենթադրում է, որ անհատն ունի անլար կամ ֆիքսված հեռախոսով հաղորդակցվելու հնարավորություն:		
<u>Հիմնավորում:</u> Հեռախոսի հասանելիությունը կարեւոր է գործատուների եւ աշխատողների, ընտանիքի եւ ընկերների հետ շփվելու համար: Այսպիսով, օգտվողը միշտ կարող է լինել կապի մեջ և տեղյակ լինել արտակարգ իրավիճակներին, որոնք կարող են առաջանալ:		
Կանաչ: Ես ունեմ թանկարժեք հեռախոս և անսահմանափակ ինտերնետ տրամադրված բջջային օպերատորներից (Beeline, VivaCell-MTS, Ucom).	**Դեղին**: Ես ունեմ ապառիկով գնված հեռախոս, վճարում եմ րոպեների համար և/կամ օգտագործում եմ ֆիքսված հեռախոսը:	**Կարմիր**: Ես ունեմ հեռախոս, սակայն զանգեր կատարել չեմ կարող կամ ընդհանրապես հեռախոս չունեմ

Ցուցանիշ 21: **Սարքավորումներ**	**Կատեգորիա:** **Հիմնական Ցուցանիշ**	**Չափում:** **Բնակարանային պայմաններ և ենթակառուցվածքներ**
<u>Սահմանում</u>: Բնակարանային սարքավորումները երաշխավորում են ավելի հարմարավետ ապրելաոճ:		
<u>Հիմնավորում: :</u> Սարքավորումներն օգտագործվում են տարաբնույթ գործողություններ իրականացնելիս՝ ինչպիսիք են սննդի պատրաստումը, բնակարանի մաքրությունը, մարզանքը և այլն:		
Կանաչ: Մեր բնակարանում կան բոլոր անհրաժեշտ սարքավորումները (լվացքի մեքենա, խոհանոցային սարքավորումներ, փոշեկուլ):	**Դեղին:** Բնակարանն ունի բոլոր անհրաժեշտ խոհանոցային սարքավորումները, սակայն մենք չունենք լվացքի մեքենա:	**Կարմիր:** Մեր բնակարանում չկան անհրաժեշտ սարքավորումներ: Մենք չունենք լվացքի մեքենա, չունենք նաև խոհանոցային սարքավորումներ, օրինակ՝ սառնարան, գազօջախ, ջեռոց և այլն:

Ցուցանիշ 22: **Խոհանոցային սարքավորումներ**	**Կատեգորիա:** **Հիմնական Ցուցանիշ**	**Չափում:** **Բնակարանային պայմաններ և ենթակառուցվածքներ**
<u>Սահմանում</u>: Ընտանիքը կարողանում է ուտելիք պատրաստել առանց առողջական ռիսկի կամ այրվածքի: Ուտելիք պատրաստելու համար անհրաժեշտ է բարձրակարգ օդափոխման համակարգ, համապատասխան տարածք, բարձր տեղադրված վառարան (80 կամ ավելի սմ) և բավարար օդափոխություն սենյակի տհաճ հագեցած օդից խուսափելու համար: Համապատասխան խոհանոցային սարքավորումների առկայությունը նույնպես կարևոր է սննդի պատրաստման արդյունավետ և անվտանգ ընթացքի համար:		
<u>Հիմնավորում:</u> <u>:</u> Բոլոր խոհանոցային հարմարություններով և սարքավորումներով հագեցած բնակարանը շատ կարևոր է: Այն բնակարանը, որտեղ բացակայում է օդափոխությունը, ստեղծվում է ոչ հիգիենիկ միջավայր, որը չի բավարարում օրինական պահանջներին:		
Կանաչ: Մեր բնակարաանն ունի օդափոխության համակարգով խոհանոց և բոլոր անհրաժեշտ խոհանոցային սարքավորումները՝ընտանիքի բոլոր անդամների համար ուտելիք պատրաստելու և պահպանելու համար:	**Դեղին**: Մենք ունենք միջին վիճակում գտնվող խոհանոց, սակայն կա ավելի լավ խոհանոցային հարմարություններ և սարքավորումներ ունենալու անհրաժեշտություն:	**Կարմիր**: Մեր բնակարանը չունի համապատասխան խոհանոց և սարքավորումներ: Մենք ստիպված ենք լինում պատրաստել մեկ այլ վայրում կամ նույն վայրը օգտագործել տարբեր նպատակներով:

Ցուցանիշ 23: **Էլեկտրաէներգիա և գազ**	**Կատեգորիա:** **Հիմնական Ցուցանիշ**	**Չափում:** **Բնակարանային պայմաններ և ենթակառուցվածքներ**
Սահմանում: Ընտանիքը տանն ունի մշտական էլեկտրաէներգիա եւ գազ:		
Հիմնավորում: : Էլեկտրաէներգիան եւ գազը կարեւոր էներգիայի աղբյուրներ են առօրիայում: Միջազգային իրավական նորմերի համաձայն մշտական էլեկտրաէներգիայի եւ գազի հասանելիությունը մարդու իրավունքներից մեկն է:		
Կանաչ: Իմ ընտանիքում մենք կարող ենք ամբողջությամբ վճարել գազի եւ էլեկտրաէներգիայի համար, մենք կոմունալ վճարների հետ կապված ֆինանսական խնդիրների չենք հանդիպում:	**Դեղին**: Իմ ընտանիքում մենք մշտապես չենք օգտվում գազից և/կամ էլեկտրաէներգիայից, քանի որ նախորդ տարվա ընթացքում գազը եւ կամ էլեկտրաէներգիան անջատվել է վճարումների հետաձգման պատճառով: Էլեկտրականությամբ աշխատող սարքավորումները երբեմն փչանում են ու չեն աշխատում:	**Կարմիր**: Իմ ընտանքում էլեկտրաէներգիան անջատվել է տարվա ընթացքում մեկ կամ ավելի անգամներ: Երբեմն մենք ստիպված ենք լինում ընտրել սննդի եւ ջեռուցման միջեւ: Տանը էլեկտրականությամբ աշխատող սարքավորումները գտնվում են ոչ սարքին վիճակում:

Ցուցանիշ 24: **Բնակարանի անվտանգություն**	**Կատեգորիա:** **Հիմնական Ցուցանիշ**	**Չափում:** **Բնակարանային պայմաններ և ենթակառուցվածքներ**
<u>Սահմանումը</u>: Անվտանգ է համարվում այն բնակարանը, որն ունի ամուր տանիք, որը կարող է դիմակայել տարբեր եղանակային պայմաններին, ունի ամուր պատեր և հատակ, որը կարող է դիմակայել ծանր քաշին: Բացի այդ, ապահով բնակարանը կունենա մի քանի ելքեր (դռներից և պատուհաններից), որոնք կարող են ամուր փակվել: Տունը կարող է դիմակայել տարբեր կլիմայական պայմաններին:		
<u>Հիմնավորում</u>: Կարևոր է, որ ընտանիքը ապրի անվտանգ պայմաններում, որը համապատասխանում է վերը նշվածին: Ապահով կենցաղային պայմանները ապահովում են կայունություն՝ այդպիսով դրական մթնոլորտ ստեղծելով երեխաների համար: Շատ ընտանիքներ պայքարում են ունենալու համար այնպիսի բնակարանային պայմաններ, որորոնք համապատասխանում են վերոնշյալին:		
Կանաչ: Իմ տունը շատ ապահով է: Չկա վնասված տեխնիկա, չկան անցքեր պատերի մեջ, չամրացված լարեր կամ պատերին չեն լինում բորբոսներ: Դռները և պատուհանները ունեն փականներ, և կառույցը հարմարեցված է եղանակային բոլոր պայմանների համար:	**Դեղին**: Իմ տունն ունի անվտանգության հետ կապված փոքր խնդիրներ, որոնք վտանգ են ներկայացնում այդ տանն ապրողների համար: Անհարմար է որոշ եղանակային պայմանների դեպքում	**Կարմիր**: Իմ տունն ունի անվտանգության լուրջ խնդիրներ, որոնք վտանգ են հանդիսանում այնտեղ ապրող մարդկանց համար: Վտանգները դրսևորվում են եղանակային որոշակի պայմաններում: Հորդառատ անձրևների ժամանակ ջուրը լցվում է տուն, ինչը դռների և պատուհանների ոչ պատշաճ վիճակի հետևանք է:

Ցուցանիշ 25: **Ջրամատակարարում և ջրահեռացում**	**Կատեգորիա:** **Առաջարկվող ցուցանիշ**	**Չափում:** **Բնակարանային պայմաններ և ենթակառուցվածքներ**
<u>Սահմանում</u>: Ընտանիքն ունի համապատասխան սանհանգույց, այն մաքուր է, սահմանազատված է և ապահովում է օգտվողի մեկուսացումը, ունի ջրահեռացման համակարգ:		
<u>Հիմնավորում:</u> : Համապատասխան սանհանգույց ունենալը կարևոր է ընտանիքի սանիտարական մաքրության և հիգիենայի համար: Հակասանիտարական պայմաններում գտնվող սանհանգույցների պատճառ կարող են դառնալ բաց լարերը, ոչ պատշաճ վիճակում գտվող առաստաղի և հատակի սալիկները, բակտերիաների բազմացումը:		
Կանաչ: Մենք ունենք համապատասխան սանհանգույց՝ օդափոխության համակարգով, տաք և սառը հոսող ջրով, որը միշտ մաքուր վիճակում է:	**Դեղին:** Մենք ավելի քան 4 հոգով օգտվում ենք սանհանգույցից, այն վնասված է և չի գտնվում մշտական մաքուր և սարքին վիճակում:	**Կարմիր:** Մենք չունենք համապատասխան սանհանգույց, այն գտնվում է կեղտոտ և անսարք վիճակում:

Ցուցանիշ 26: **Համայնքի անվտանգությունը**	**Կատեգորիա:** **Հայեցակարգային ցուցանիշ**	**Չափում:** **Բնակարանային պայմաններ և ենթակառուցվածքներ**
<u>Սահմանումը</u>: Համայնքի անվտանգության ներքո հասկանում ենք ֆիզիկական, բռնի գործողությունների (գողություն, վնասում, և այլն) իրականացում ընտանիքի սեփականության (բնակարան, կահույք, մեքենա, կենդանիներ և այլն) նկատմամբ՝ բնակարանի ներսում կամ դրանից դուրս:		
<u>Հիմնավորում:</u> Մարդու համար կարևոր է իր համայնքում անվտանգ զգալու հանգամանքը: Եթե ընտանիքի անդամներից որևէ մեկը կամ ընտանիքը չունի անվտանգության զգացում, ապա ողջ ընտանիքը կամ տառապում է բռնի գործողություններից կամ այն հանգեցնում է ընտանեկան եկամտի կորստին:		
Կանաչ: Վերջին 12 ամիսների ընթացքում իմ ընտանիքի անդամների նկատմամբ չի իրականացվել որևէ տեսակի բռնի գործողություն, այդ թվում գողություն:	**Դեղին**: Վերջին 12 ամիսների ընթացքում իմ ընտանիքի նկատմամբ եղել է բռնի գործողություն/գողություն և հասցված վնասը եղել է ավելի փոքր, քան մեր ընտանիքի շաբաթական եկամուտը:	**Կարմիր**: Վերջին 12 ամիսների ընթացքում իմ ընտանիքը մի քանի անգամ ենթարկվել է բռնի գործողությունների/գողության և/կամ մենք մեկ գործողության զոհ ենք եղել, որի հասցված վնասը մեծ է եղել ընտանիքի շաբաթական եկամտից:

Ցուցանիշ 27: **Առանձնացված ննջասենյակներ**	**Կատեգորիա:** **Հայեցակարգային ցուցանիշ**	**Չափում:** **Բնակարանային պայմաններ և ենթակառուցվածքներ**
<u>Սահմանում</u>: Հարմարավետ բնակարանը երաշխավորում է ընտանիքի բոլոր անդամների համար բավարար անձնական տարածքի և առկայությունը, որը զերծ է պահում ընտանիքը գերբնակեցումից և չափահասների, դեռահասների ու երեխաների միջև ննջասենյակի հարկադրված կիսումից: Գերբնակեցում է համարվում միջինում երեք կամ ավելի անձանց առկայությունը մեկ սենյակում: Այս դեպքում 2 և ցածր տարիքի երեխաները չեն հաշվառվում:		
<u>Հաստատում:</u> Տարածքի հարկադրված կիսումը կարող է զայրույթ և երբեմն նաև բռնության դրսևորումներ առաջացնել ընտանիքի ներսում: Անհատների ապահովումը առանձին ննջասենյակներով նրանց թույլ է տալիս ունենալ անձնական տարածք հիանգստանալու համար:		
Կանաչ: Յուրաքանչյուրն ունի իր սեփական ննջասենյակը կամ որոշ անհատներ կիսում են դրանք և դա իդեալական է մեր ընտանիքի համար:	**Դեղին:** Մեր ընտանիքի որոշ անդամներ ցանկանում են առանձին ննջասենյակներ, սակայն չունեն(օրինակ երեխաները, ովքեր կիսում են ննջասենյակը, բայց ցանկանում են ունենալ իրենց սեփականը):	**Կարմիր:** Ընտանիքի բազմաթիվ անդամներ հարկադրաբար քնում են նույն ննջասենյակում: Մեր բնակարանը գերբնակեցված է և մեզ անհրաժեշտ է ավելի մեծ տարածք:

Ցուցանիշ 28: **Համապատասխան հագուստ**	**Կատեգորիա:** **Առաջարկվող ցուցանիշ**	**Չափում:** **Բնակարանային պայմաններ և ենթակառուցվածքներ**
Սահմանում: Ընտանիքի բոլոր անդամներն ունեն համապատասխան հագուստ եւ կոշիկներ՝ համապատասխան տարվա եղանակներին (այսինքն ամռանը թեթեւ կոշիկներ եւ ձմռանը տաք կոշիկ):		
Բացատրություն: Կարեւոր է համապատասխան հագուստ ունենալ բոլոր եղանակային պայմաններին դիմակայելու եւ աշխատանքային միջավայրում մասնագիտորեն ներկայանալու համար: Համապատասխան հագուստ չունենալը ոչ միայն ֆիզիկապես կարող է ազդել անհատի վրա, այլ նաև հոգեպես:		
Կանաչ: Ընտանիքի անդամներն ունեն համապատասխան հագուստ յուրաքանչյուր եղանակի համար, և նրանք կարող են փոխել հագուստներն ամեն օր: Նրանք նաեւ ունեն հագուստ աշխատանքի գնալու համար ըստ իրենց աշխատանքի ոլորտի:	**Դեղին:** Ընտանիքի անդամներն ունեն համապատասխան հագուստ եւ կարող են փոխել հագուստներն ամեն օր, բայց մենք բոլորս չէ, որ ունենք աշխատանքի գնալու համար համազգեստ, (օրինակ աշխատանքային կոշիկներ, կոստյում եւ այլն):	**Կարմիր:** Ընտանիքի անդամները չունեն բավարար հագուստ ամեն օր փոխելու կամ եղանակային տարբեր պայմանների համար:

Ցուցանիշ 29: **Տան ապահովություն**	**Կատեգորիա:** **Առաջարկվող ցուցանիշ**	**Չափանիշ:** **Բնակարանային պայմաններ և ենթակառուցվածքներ**
<u>Սահմանում</u>: Հարմարավետ բնակարան է համարվում այն բնակարանը, որը ունի՝ A) Բավարար աթոռներ, սեղաններ և արծաթաղոծ սպասք ընտանիքի բոլոր անդամների համար B) Բավարար մահճակալներ ընտանիքի բոլոր անդամների համար (մեկ մահճակալ յուրաքանչյուր անդամի կամ զույգի համր) C) Օդափոխիչ և/կամ օդորակիչ և ջեռուցում		
<u>Հաստատում</u>: Բնակարանային պայմանների որակը ուղղակիորեն կապված է երեխաների բարեկեցության հետ: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, այն ընտանիքները, որոնք անհարմար բնակարանից տեղափոխվել են հարմարավետ բնակարան ցուցաբերում ենք առաջընթաց՝ երեխաների մոտ նկատել են գնահատականների բարելավում, ավելի լավ ֆինանսական վիճակ, լիազորված ծնողներ և կայուն տնային տնտեսություն: Բնակարանի հարմարավետությունը նաև երաշխավորում է ընտանիքի ֆիզիկական և մտավոր առողջության օպտիմալությունը:		
Կանաչ: Մեր բնակարանը շատ հարմարավետ է և այնտեղ երբեք չափազանց տոթ կամ ցուրտ չէ: Մենք ունենք բավարար կահույք, սարքավորումներ և կացության տարածք՝ սովորելու, հանգստանալու և միասին ճաշելու համար:	**Դեղին:** Մեր բնակարանը մասամբ է հարմարավետ և երբեմն այնտեղ կա՛մ չափազանց տոթ է կամ՝ չափազանց ցուրտ: Մեր բնակարանը կարիք ունի ավելի լավ կահույքի և սարքավորումների, քանի որ այն ոչ սարքին վիճակում է գտնվում:	**Կարմիր:** Մեր բնակարանը հարմարավետ չէ և այնտեղ միշտ կամ չափազանց տոթ է, կամ չափազանց ցուրտ: Մենք չունենք բավարար կահույք և համապատասխան կացության տարածք բոլորի ապելու և սնվելու համար:

Ցուցանիշ 30: **Հասարակական տրանսպորտ**	**Կատեգորիա:** **Առաջարկվող ցուցանիշ**	**Չափում:** **Բնակարանային պայմաններ և ենթակառուցվածքներ**
<u>Սահմանում</u>: Հասարակական տրանսպորտային միջոց ասելով, նկատի ունենք հասարակական տրանսպորտի հասանելիությունը ընտանիքի անդամների համար՝ ընդ որում նաև սեփական տրանսպորտ (մեքենա, մոտոցիկլետ կամ հեծանիվ), որը հասանելի է առնվազն մեկ ժամ:		
<u>Հաստատում</u>: Տրանսպորտը հնարավորություն է ընձեռում աշխատանքի ընդունման, առողջապահական ծառայություններից օգտվելու եւ այլ կարիքների համար:		
Կանաչ: Իմ ընտանիքն ունի ընդհանուր տրանսպորտային միջոց (մեքենա, մոտոցիկլ, հեծանիվ) ճանապարհորդելու համար, որը մենք օգտագործում ենք կանոնավոր կերպով	**Դեղին:** Իմ ընտանիքը չունի կանոնավոր տրանսպորտային միջոց: Դժվարությամբ ենք ուղեւորվում դեպի այն վայրեր, ուր պետք է հասնենք: Տրանսպորտի ծախսերը խնդրահարույց են, եւ մենք դժվարանում ենք մեկ վայրից մյուսը մեկնել:	**Կարմիր:** Մեր տարածքում կականոնավոր հանրային տրանսպորտ չկա, իսկ եթե կա, ապա շատ թանկ է:

Ցուցանիշ 31: **Կայուն կացարան**	**Կատեգորիա:** **Առաջարկվող ցուցանիշ**	**Չափում:** **Բնակարանային պայմաններ և ենթակառուցվածքներ**
<u>Սահմանում</u>: Կայուն օթևանը բնորոշվում է՝ որպես ընտանիքի համար ապահով բնակության վայր, անկախ նրանից դա իրենց անձնական սեփականությունն է, թե վարձու տուն, կամ բնակարան.		
<u>Հաստատում</u>: Շատ կարևոր է, որ ընտանիքն ունենա օթևան վերադառնալու: Եթե ընտանիքը չունի, ապա այն կարող է ազդել երեխայի գիտակցության վրա և լրացուցիչ սթրես դառնալ ընտանիքի առօրյայում, խորացնել և վատթարացնել այն:		
Կանաչ. Մենք ունենք երկարաժամկետ վարձակալությամբ կամ սեփական բնակարան: Մենք գոհ ենք մեր վարձակալության պայմանագրից և վստահ ենք, որ մենք կարող ենք այլընտրանքային բնակարան ձեռք բերել, եթե դրա կարիքն ունենանք:	**Դեղին:** Մենք դժգոհ ենք մեր ընթացիկ վարձակալության պայմանագրից կամ առկա է տեղափոխվելու վտանգ: Մոտ ապագայում հնարավոր է մենք ի վիճակի չլինենք վճարելու այն բնակարանի համար, որտեղ բնակվում ենք:	**Կարմիր:** Անցյալ տարի մեկ կամ մեկից ավելի գիշեր մենք գիշերելու տեղ չենք ունեցել, մենք ապրում ենք ժամանակավոր բնակարանում, մենք վտարված լինելու լուրջ վտանգի տակ ենք կամ ստիպված ենք թողնել տունը առանց մեր ցանկության:

Կրթություն և մշակույթ

13 Ցուցանիշ

- Երեխաները ներգրավված են կրթության համակարգում և հաճախում են դպրոց
- Տեղեկատվության հասանելիություն
- Գրագիտություն
- Բյուջեն պլանավորելու և կազմելու ունակություն
- Մարդու իրավունքների մասին իրազեկվածություն
- Երեխայի աշխատանք
- Մասնագիտական կրթություն
- Հաղորդակցություն և սոցիալական կապիտալ
- Զվարճանք և ֆիզիկական ակտիվություն
- Եկամուտ ստեղծելու գիտելիքներ և հմտություններ
- Այլ մշակույթի հանդեպ հարգանք
- Դպրոցական գրքեր և պարագաներ
- Մշակութային ավանդույթների և ժառանգությա արժևորում

Ցուցանիշ 32: **Հաճախելիության մակարդակը դպրոցում**	**Կատեգորիա:** **Առաջարկվող ցուցանիշ**	**Չափում:** **Կրթություն և մշակույթ**
Սահմանում: Ընտանիքի այն անդամները, ովքեր դպրոցահասակ են, հաճախում են դպրոց:		
Բացատրություն: Ստանալով պատշաճ կրթություն, անհատը ավելի հագեցած կյանք է ունենում և կարողանում է իրեն դրսևորել որպես չափահաս:		
Կանաչ: Իմ ընտանիքի բոլոր անդամներն ավարտել են դպրոցը: 6-10 տարեկան երեխաները ստանում են տարրական կրթություն: 14-16 տարեկան անդամները ստանում են միջնակարգ կրթություն: 16-18 տարեկան անդամները հաճախում են ավագ դպրոցներ կամ քոլեջներ ու ստանում են միջին մասնագիտական կրթություն:	**Դեղին:** Իմ ընտանիքում որոշ երեխաներ չեն կարողանում ստանալ տարրական կրթություն, միջին գնահատականը կազմում է 3 կամ ավելի ցածր:	**Կարմիր:** Կան ընտանիքի անդամներ, ովքեր չեն հաճախում դպրոց: 16-18 տարեկան անդամները չեն ստանում համապատասխան կրթություն:

Ցուցանիշ 33: **Տեղեկատվության մատչելիություն**	**Կատեգորիա:** **Հայեցակարգային ցուցանիշ**	**Չափում:** **Կրթություն և մշակույթ**
Սահմանում. Տեղեկատվության մատչելիության միջոցներ, արդյո՞ք ընտանիքն ունի ինտերնետ, ռադիո կամ հեռուստատեսություն: Այս տեղեկատվական միջավայրերը օգտագործվում են նորությունների (ազգային եւ միջազգային) հասանելիության, ուսումնական ծրագրերի կամ հանգստի նպատակով օգտագործելու համար: Ինտերնետի հասանելիությունը հնարավոր է զարգացած բջջային սարքով (սմարթֆոն) կամ ունենալով ինտերնետ կապ տանը:		
Հիմնավորում. Ընթացիկ միջոցառումների հասանելիությունը հնարավորություն է տալիս անհատներին լավ տեղեկացված լինել եւ թույլ է տալիս բարձրացնել կյանքի որակը:		
Կանաչ: Իմ ընտանիքն ստանում է համապատասխան տեղեկատվություն մի շարք լրատվամիջոցներից եւ այդպիսով տեղեկացված է կատարվող փոփխություններից:	**Դեղին**: Իմ ընտանիքը երբեմն համապատասխան տեղեկատվություն է ստանում, կամ մենք օգտագործում ենք տարբեր մեդիա աղբյուրներ, բայց ավելի շատ ժամանցային նպատակներով, քան զուտտեղեկատվություն ստանալու:	**Կարմիր.** Իմ ընտանիքը շատ սահմանափակված է կամ տեղեկացված չէ և չունի էլ միջոցներ տեղեկացված լինելու:

Ցուցանիշ 34: **Գրագիտություն**	**Կատեգորիա:** **Առաջարկվող ցուցանիշ**	**Չափում:** **Կրթություն և մշակույթ**
<u>Սահմանում</u>: Գրագիտություն, կամ կարդալու, գրելու և հասկանալու հիմնական հմտությունները: Ընտանիքի անդամները, ովքեր 15 և բարձր տարիքի են, կարողանում են կարդալ և գրել, և գրագետ ձևով արտահայտել իրենց մտքերը:		
<u>Հիմնավորում:</u> Գրագիտությունը կարեւոր է տնտեսական և անձնական զարգացման, ինչպես նաեւ անհատի եւ համայնքի բարեկեցության համար:		
Կանաչ: Իմ ընտանիքի անդամները կարողանում են գրել և կարդալ, ընդ որում նաև տիրապետում են գրական գրելաոճին:	**Դեղին:** Իմ ընտանիքի անդամները կարողանում են գրել և կարդալ, բայց նրանց անհրաժեշտ է ստանալ անհրաժեշտ գիտելիքներ գրական գրելաոճին տիրապետելու համար	**Կարմիր:** Իմ ընտանիքի անդամները չեն կարողանում գրել և կարդալ

Ցուցանիշ 35: **Պլանավորում և բյուջետավորում**	**Կատեգորիա:** **Առաջարկվող ցուցանիշ**	**Ոլորտ:** **Կրթություն և մշակույթ**
<u>Սահմանում.</u> Այն ենթադրում է, որ ընտանիքը պլանավորում եւ բյուջետավորում է իրականացնում եւ հետեւում է դրանց կարճ, միջին եւ երկարաժամկետ ընթացքին, հետեւում են այդ ծրագրերին:		
<u>Հիմնավորում:</u> Բյուջետավորումը թույլ է տալիս ղեկավարել բյուջեն և չծախսել նախատեսվածից ավելի գումար:		
Կանաչ: Իմ ընտանիքը իրականացնում է բյուջետավորում և հետևում է դրան:	**Դեղին**: Իմ ընտանիքը բյուջետավորում է, սակայն երբեմն մենք ծախսում ենք նախատեսվածից ավելի գումար:	**Կարմիր**: Իմ ընտանիքում դժվար է ղեկավարել ծախսերը կամ մենք շատ քիչ գումար ունենք ծախսերի համար:

Ցուցանիշ 36: **Մարդու իրավունքների մասին իրազեկվածություն**	**Կատեգորիա:** **Առաջարկվող ցուցանիշ**	**Չափում:** **Կրթություն և մշակույթ**
<u>Սահմանում.</u> Մարդու իրավունքները հռչակվում են անփոխարինելի, անբաժանելի և ցանկացած քաղաքական իշխանության հասանելիության սահմաններում: Նրանք նպատակ ունեն պաշտպանել առավել խոցելի բնակչությանը՝ կանայք, երեխաներ, տարեցներ և հաշմանդամություն ունեցողա անձինք.		
<u>Հիմնավորում.</u> Հասկանալով մարդու իրավունքները, անհատը վերահսկում է իր կյանքը և հասկանում է, որ մարդը արժեք է, անկախ նրանից, թե ինչ են ասել կամ թե ինչպես են վերաբերվել:		
Կանաչ: Իմ ընտանիքը գիտելիքներ ունի կանանց, երեխաների, տարեցների եւ հաշմանդամների իրավունքների մասին , մենք հարգում ենք այդ իրավունքները:	**Դեղին:** Իմ ընտանիքն ունի անորոշ պատկերացում, թե ինչ է մարդու իրավունքները, և մենք չենք համակրում կանանց, երեխաների, տարեցների կամ հաշմանդամություն ունեցող անձանց բացասական վերաբերմունքը:	**Կարմիր.** Իմ ընտանիքը չգիտի, թե ինչ է մարդու իրավունքներրը կամ երբեմն կանայք, երեխաները, տարեցները կամ հաշմանդամները վատ վերաբերմունքի են արժանանում իմ ընտանիքում:

Ցուցանիշ 37: **Երեխայի աշխատանք**	**Կատեգորիա:** **Առաջարկվող ցուցանիշ**	**Չափում:** **Կրթություն և մշակույթ**
<u>Սահմանումը.</u> Երեխայի աշխատանքը սահմանվում է որպես այնպիսի աշխատանք, որը զրկում է տղաներին և աղջիկներին մանկությունից և նրանց ներուժից: Երեխաների աշխատանքը ցանկացած տեսակի աշխատանք է, որը խանգարում է կրթությանը կամ վտանգավոր է երեխայի ֆիզիկական, մտավոր կամ բարոյական բարեկեցության համար: Աշխատանքի օրինակները, որոնք վնասակար չեն համարվում, այն են, որ երեխաները տանը իրենց ծնողներին են տալիս կամ նրանց համագործակցությունն ընտանեկան բիզնեսում, որը իրականացվում է դպրոցական ժամերից դուրս:		
<u>Հիմնավորում.</u> Երեխաների աշխատանքը ոչ միայն վնասակար է առողջության, կրթության և երեխաների բարեկեցության համար, այլև հավերժացնում է աղքատության ցիկլը:		
Կանաչ. Իմ ընտանիքում ոչ ոք մինչ 14 տարեկան հասնելը չի աշխատում:	**Դեղին:** Իմ ընտանիքում կա 14 տարեկանից փոքր առնվազն մեկ տղա/աղջիկ ով աշխատում է, սակայն երեխան այնուամենայնիվ կանոնավոր կերպով հաճախում է դպրոց:	**Կարմիր.** Իմ ընտանիքում կա 14 տարեկանից փոքր առնվազն մեկ տղա/աղջիկ, ով աշխատում է, և կանոնավոր կերպով դպրոց չի հաճախում:

Ցուցանիշ 38: **Մասնագիտական կրթություն**	**Կատեգորիա:** **Առաջարկվող ցուցանիշ(SI)**	**Չափում:** **Կրթություն և մշակույթ**
Սահմանում: Մասնագիտական կրթություն է համարվում այն կրթությունը, որը ստանում են ավագ դպրոցից կամ միջնակարգ դպրոցից հետո:		
Հիմնավորում: Մասնագիտական կրթությունը թույլ է տալիս հաջողակ լինել կյանքում և ունենալ ավելի լավ աշխատանք:		
Կանաչ: Իմ ընտաիքում առնվազն մեկ հոգի ավարտել է կամ այժմ սովորում է միջնակարգ, միջին մասնագիտական կրթական հաստատությունում կամ քոլեջում:	**Դեղին:** Իմ ընտանիքի անդամներից մեկը ստացել է միջին մասնագիտական կրթություն, սակայն կիսատ է թողել:	**Կարմիր:** Իմ ընտանիքում ոչ ոք չի հաճախել միջնակարգ, միջին մասնագիտական կրթական հաստատություն կամ քոլեջ:

Ցուցանիշ 39: **Հաղորդակցություն և սոցիալական կապիտալ**	**Կատեգորիա:** **Առաջարկվող ցուցանիշ(SI)**	**Չափում:** **Կրթություն և մշակույթ**
<u>Սահմանում:</u> Ընտանիքը ապահովում է անվտանգ և լայն սոցիալական ցանց, որը թույլ է տալիս ստանալ բազմաթիվ հնարավորություններ:		
<u>Հիմնավորում:</u> Հաղորդակցությունը և սոցիալական կապիտալը կարևոր են ընտանիքի աճի և վստահության համար, քանի որ այն ազդում է ֆիզիկական անձի սոցիալական վարքագծի եւ նրա բարօրության վրա:		
Կանաչ: Իմ ընտանիքն ունի լայն անձնական ցանցեր, որոնք դրականորեն են ազդում մեր կենսակերպի վրա: Մենք համոզված ենք, որ այդ ցանցերը մեզ ընձեռնում են նոր հնարավորություններ:	**Դեղին:** Իմ ընտանիքն ունի լայն ցանցեր, բայց մենք վստահ չենք, որ դրանք կարող ենք օգտագործել:	**Կարմիր:** Իմ ընտանիքը չի շփվում շատերի հետ: Մարդիկ, որոնց մենք գիտենք, վատ ազդեցություն ունեն ընտանիքի որոշ անդամների վրա:

Ցուցանիշ 40: **Ժամանց եւ հանգիստ**	**Կատեգորիա:** **Առաջարկվող ցուցանիշ**	**Չափում:** **Կրթություն և մշակույթ**
Սահմանում. Զվարճանքի մատչելիությունը սահմանում է բոլոր գործողությունները ընտանիքի անդամների համար, որոնք օգտագործվում են զվարճանալու, հանգստանալու համար, ժամանակավորապես աշխատանքից հեռանալու միջոցներով:		
Հիմնավորում. Ժամանցը եւ հանգիստը բարձրացնում է անձի կյանքի որակը, հատկապես ֆիզիկական եւ մտավոր առողջության համար:		
Կանաչ: Իմ ընտանիքը ժամանակ է տրամադրում զվարճանքին և հանգստին, ինչպես նաև զբաղվում է սպորտով: Հարևանների հետ ունենք ընկերական հարաբերություններ:	**Դեղին:** Իմ ընտանիքը ժամանակ է տրամադրում զվարճանքին և հանգստին, սակայն մենք սովորաբար դա անում ենք ընտանիքի մյուս անդամների հետ:	**Կարմիր:** Իմ ընտանիքը ժամանակ չի տրամադրում զվարճանքին և հանգստին:

Ցուցանիշ 41 **Եկամտի մասին գիտելիք և եկամուտ**	**Կատեգորիա** **Առաջարկվող ցուցանիշ**	**Չափում** **Կրթություն և մշակույթ**
<u>Սահմանում:</u> Եկամտի մասին գիտելիքը և հմտությունները հնարավորություն են տալիս ընտանիքի անդամներին ունենալ եկամուտ աշխատանք գտնելով կամ ինքնազբաղությամբ (ձեռնարկատիրությամբ) զբաղվելով:		
<u>Բացատրություն:</u> Կարեւոր է ունենալ եկամտի մասին անհրաժեշտ հմտություններ և գիտելիքներ, քանի որ առանց գիտելիքի բազայի, անհատը չի կարողանա միջոցներ տրամադրել իր կամ իր ընտանիքի կարիքների համար:		
Կանաչ: Իմ ընտանիքի անդամները աշխատունակ են, նրանք ունեն մասնագիտական կրթություն և ունակություններ՝ աշխատանք գտնելու կամ բիզնես սկսելու համար:	**Դեղին**: Իմ ընտանիքի անդամները ունեն աշխատանքի համար հմտություններ, բայց նրանք չեն անցել անհրաժեշտ դասընթացներ տվյալ բնագավառում: Նրանք կարող են աշխատանք գտնել, սակայն կունենան դժվարություններ հարցազրույցի կամ դիմումը լրացնելու ժամանակ:	**Կարմիր**: Իմ ընտանիքի անդամները երբեք չեն աշխատել կամ չունեն հմտություններ ինչ-որ աշխատանք կամ բիզնես սկսելու համար:

Ցուցանիշ 42: **Հարգանք այլ մշակույթների հանդեպ**	**Կատեգորիա** **Առաջարկվող ցուցանիշ**	**Չափում:** **Կրթություն և մշակույթ**
<u>Սահմանում:</u> Բազմազանության հանդեպ հարգանքը ենթադրում է հարգանք տարբեր մշակույթների նկատմամբ և ունակություն միևնույն կերպ վերաբերվել նրանց, ովքեր չեն կիսում միևնույն գաղափարները, կրոնը, ապրելակերպը, լեզուն, ռասսան, սեռական կողմնորոշումը կամ մարդիկ, ովքեր ունեն հաշմանդամություն: Ուրիշների հանդեպ հարգանքը նրանց անքակտելի արժեքների, անհատների ու հասարակության բնածին իրավունքների ճանաչումն է:		
<u>Բացատրություն:</u> Մշակույթը ձևավորում է յուրաքանչյուր մարդու անհատականությունը և ազդում մեր վարքագծի վրա: Մշակութային բազմազանությունը ստիպում է ընդունել, իսկ երբեմն ինտեգրվել և նույնականացվել այլ մշակույթների մեջ: Մշակութային բազմազանությունը զարգացել է երկար տարիների ընթացքում և մեծ տարածում գտել աշխարհում:		
Կանաչ: Իմ ընտանիքի անդամները ճանաչում և գնահատում են մշակութային տարբերությունները և բոլորին հավասարապես են վերաբերվում:	**Դեղին**: Իմ ընտանիքի ոչ բոլոր անդամներն են հանդուրժում կամ հարգում տարբեր մշակույթներ կամ հավասարապես վերաբերվում ուրիշներին:	**Կարմիր**: Իմ ընտանիքի անդամների մեծամասնությունը չի հանդուրժում կամ հարգում տարբեր մշակույթներ և մարդկանց նկատմամբ խտրական կամ բացասական վերաբերմունք ունի:

Ցուցանիշ 43 **Դասագրքեր և գրենական պիտույքներ**	**Կատեգորիա** **Առաջարկվող ցուցանիշ**	**Չափում** **Կրթություն և մշակույթ**
<u>Սահմանում.</u> Դպրոցական պարագաները անհրաժեշտ են ընտանիքի անդամների համար `արդյունավետ սովորելու համար:		
<u>Բացատրություն:</u> Գրենական պիտույքները թույլ են տալիս անցկացնել դասընթացն ավելի ինտերակտիվ ձևով և համախմբել աշակերտներին: Ապացուցվել է, որ գրենական պիտույքները օգնում են բարձրացնել կրթական մակարդակը:		
Կանաչ: Իմ ընտանիքում երեխաներն ունեն անհրաժեշտ հագուստ, գրենական պիտույքներ, գրքեր և այլ պարագաներ, որոնք օգնում են լավ կրթություն ստանալուն:	**Դեղին**: Իմ ընտանիքում երեխաներն ունեն հիմնական հագուստ և գրենական պիտույքներ, սակայն կցանկանայինք ունենալ հավելյալ պիտույքներ ևս, որ երեխաները կարողանան լավ կրթություն ստանալ:	**Կարմիր**: Իմ ընտանիքում երեխաները չունեն անհրաժեշտ հագուստ, գրենական պիտույքներ, որոնք կօգնեն լավ կրթություն ստանալուն:

Ցուցանիշ 44: **Մշակութային ավանդույթների եւ ժառանգության արժեքը**	**Կատեգորիա:** **Առաջարկվող ցուցանիշ (SI)**	**Չափում:** **Կրթություն և մշակույթ**
Սահմանում: Ընտանիքը հարգում եւ գնահատում է մշակութային բազմազանությունը: Նրանք լավ են վերաբերվում այն մարդկանց, որոնք չեն կիսում իրենց համոզմունքները (սեռական, կրոնական, մշակութային եւ այլն):		
Հիմնավորում: Հավասարությունը մարդու իրավունք է եւ կարեւոր է, որ ընտանիքներն ընդունեն այս իրավունքը եւ համապատասխանաբար հավասարություն ապահովեն համայնքում: Հարգելով մշակութային արժեքները, ընտանիքները դրական մթնոլորտ են ստեղծում:		
Կանաչ: Իմ ընտանիքը գնահատում է մշակութային ավանդույթները, եւ մենք ունենք համայնքին պատկանելության ուժեղ զգացում:	**Դեղին:** Իմ ընտանիքը ինտեգրված է համայնքին, սակայն երբեմն մենք իզոլացված ենք լինում նրանից:	**Կարմիր:** Իմ ընտանիքը ինտեգրված չէ համայնքին:

Կազմակերպվածություն և մասնակցություն

4 ցուցանիշ

- Ազդեցություն պետական մարմինների վրա
- Մասնակցություն համայնքի կյանքին
- Կոնֆլիկտների լուծում
- Ընտրություններ և քաղաքացիական ներգրավում

Ցուցանիշ 45:	**Կատեգորիա:**	**Չափում:**
Ազդեցություն պետական մարմինների վրա	**Հայեցակարգային ցուցանիշ**	**Կազմակերպվածություն և մասնակցություն**

<u>Սահմանում</u>: Պետական մարմինների վրա ազդեցություն ասլեով նկատի ունենք, որ ընտանիքները հնարավորություն ունի տեղի իշխանություններին դիմելու՝ համայնքահեն հիմնախնդիրների լուծման նպատակով:

<u>Հիմնավորում:</u> Իշխանությունները կարող են լինել լուծումների միակ աղբյուրը, ըստ այդմ բովանդակությունը կարևոր է ընտանիքների համար, որպեսզի իրենց հարմար զգան սեփական խնդիրներն ներկայացնել իշխանություններին:

Կանաչ: Իմ ընտանիքի անդամները համայնքում խնդիրներ նկատելիս գիտեն ու՞մ տեղեկացնել այդ և ո՞ւմ հետ խոսե/քննարկելլ այդ մասին:	**Դեղին**: Իմ ընտանիքում, մենք ջանքեր չենք ներդնում համայնքային խնդիրների լուծման համար: Մենք միայն մասնակցություն ենք ունենում, հասկանալու համար ինչպես կազմակերպել:	**Կարմիր**: Իմ ընտանիքում մենք չգիտենք, թե ինչպես կապվել տեղական իշխանությունների հետ կամ մենք կարծում ենք, որ որևէ բան չի կարող փոխվել:

Ցուցանիշ 46: **Մասնակցություն համայնքի կյանքին**	**Կատեգորիա:** **Հայեցակարգային ցուցանիշ**	**Չափում:** **Կազմակերպվածություն և մասնակցություն**
<u>Սահմանում:</u> Մասնակցությունը համայնքի կյանքին ցույց է տալիս, թե որքանով են ընտանիքի անդամները պատկանում և ներգրավված համայնքային խմբերում և արտահայտում իրենց տեսակետները, լուծում հիմնախնդիրներ և աջակցություն ստանում: Օրինակ՝ կրոնական խմբեր, համայնքային կենտրոններ, մասնագիտական ասոցիացիաներ և այլն		
<u>Հիմնավորում:</u> Աջակցող համայնքը շատ կարևոր է բարելավվելու ընտանիքի անդամների սոցիալական ներգրավումն ու կյանքի որակի բարելավումը:		
Կանաչ: Իմ ընտանիքում մենք հաճախկի մասնակցում ենք համայնքային միջոցառումներին: Մենք համայնքի այն հատվածից ենք, ում համայնք աջակցում է:	**Դեղին**: Մենք միայն այցելում ենք կրոնական ծառայություններ, կամ այլ ծառայություններ և մենք ակտիվորեն ներգրավված չենք համայնքի կյանքում:	**Կարմիր**: Մենք ներգրավված չենք որևէ կարգի համայնքային միջոցառման մեջ: Մենք ընտանիքի անդամներից բացի այլ աջակիցներ չունենք:

Ցուցանիշ 47: **Կոնֆլիկտների լուծում**	**Կատեգորիա:** **Առաջարկվող ցուցանիշ**	**Չափում:** **Կազմակերպվածություն և մասնակցություն**
<u>Սահմանում</u>: Կոնֆլիկտի լուծումը ընտանիքի կողմից որևէ հիմնախնդրի լուծումն է կառուցողական կերպով՝ որպես խումբ:		
<u>Հիմնավորում</u>: Կոնֆլիկտների արդյունավետ լուծման հմտությունը հնարավորություն է տալիս անհատներին զարգացնել մասնագիտական հմտությունները, հիմնախնդիրների լուծման կարողությունները և ընդլայնել փոխհարաբերությունների շրջանակը		
Կանաչ: Երբ իմ ընտանիքում խնդիրներ են լինում, մենք բարձրաձայնում ենք դրանք:Այնուհետև խնդիրները արդյունավետ կերպով լուծում են ստանում:	**Դեղին**: Երբ մենք մեր ընտանիքում կամ համայնքում խնդիր ենք տեսնում սովորաբար որևէ բան չենք անում և միշտ անվստահ ենք մեր կողմից կայացված որոշումների նկատմամբ:	**Կարմիր**: Իմ ընտանիքում, երբ մենք հիմնախնդրի ենք հանդիպում, սովորաբար խուսափում ենք պատասխանատվությունից և սպասում ենք մինչև ուրիշները լուծում կգտնեն:

Ցուցանիշ 48:	**Կատեգորիա:**	**Չափում:**
Քվեարկություն եւ քաղաքացիական ներգրավում	**Առաջարկվող ցուցանիշ**	**Կազմակերպվածություն և մասնակցություն**

Սահմանում: Իմ ընտանիքի չափահաս անդամները հաշվառված են ընտրություն կատարելու համար և սովորաբար մասնակցում են քվեարկություններին, ինչպես նաև/կամ մասնակիցն են քաղաքացիական շարժումներին:

Հիմնավորում: Քվեարկությունը ակտիվ քաղաքացիության միջոցներից մեկն է և շատ կարևոր է ձայնը լսելի դարձնելու տեսանկյունից:

Կանաչ:	**Դեղին:**	**Կարմիր:**
Իմ ընտանիքում մենք մասնակցում ենք գրեթե բոլոր ընտրություններին, ներառյալ վերջին ընտրությունները: Մենք նաև մասնակցում ենք այլ քաղաքացիական նախաձեռնություններին, օրինակ նիստերը, ցույցերը և այլն:	Մենք երբեմն քվեարկում ենք կամ ընդգրկվում ենք քաղաքացիական այնպիսի արշավներում, ինչպես բողոքի ցույցերը, սակայն միայն խնդիրը տեսնելու պարագայում:	Մենք չենք մասնակցում ընտրություններին կամ այլ քաղաքացիական շարժումներին և միջոցառումներին:

Ինքնաճանաչում և մոտիվացիա

8 ցուցանիշ

- Ինքնուրույնություն
- Կարիքների գիտակցում
- Ինքնավստահություն և ինքնագնահատական
- Հուզական գիտակցություն
- Նախաձեռնողականություն
- Ընտանեկան բռնություն
- Բարոյական գիտակցություն
- Գիտելիքներն ու հմտությունները զարգացնելու ցանկություն/կամք

Ցուցանիշ 49: **Ինքնուրույնություն**	**Կատեգորիա:** **Հայեցակարգային ցուցանիշ**	**Չափում:** **Ինքնաճանաչում և մոտիվացիա**
<u>Սահմանումը</u>: Ընտանիքի բոլոր անդամներն իրենց դերին համապատասխան մասնակցում են որոշումների կայացմանը: Իսկ այն հարցերում, որոնք վերաբերում են բուն իրենց անձնական կյանքին որոշումներ են կայացնում ինքնուրույն (ընտրություններ, սեռական կողմնորոշում, մասնակցություն միջոցառումներին, կրոն)		
<u>Հիմնավորումը</u>: Շատ կարևոր է կարողանալ որոշումներ կայացնել այն ամենի մասին, ինչն ուղղակիորեն ազդեցություն է գործում քեզ վրա: Եթե անհատը չի կարող դա անել, դա նրա իրավունքների խախտում է:		
Կանաչ: Իմ ընտանիքում բոլոր անդամները ներգրավված են որոշումների կայացման գործընթացում և ունեն ձայնի իրավունք: Միևնույն ժամանակ, յուրաքանչյուրն անկախ է իր անձնական կյանքի վերաբերյալ որոշումներ կայացնել:	**Դեղին**: Իմ ընտանիքում մի քանիսն են որոշում կայացնում և արգելում են մասնակցությունն անգամ այն դեպքերում, եթե հարցն այլ անդամի է վերաբերում:	**Կարմիր**: Իմ ընտանիքում որոշում կայացնողը մեկն է, և նրա խոսքը մյուսների համար օրենք է:

Ցուցանիշ 50: **Կարիքների գիտակցում**	**Կատեգորիա:** **Հայեցակարգային ցուցանիշ**	**Չափում:** **Ինքնաճանաչում և մոտիվացիա**
<u>Սահմանումը:</u> *Կարիքների գիտակցում* ասելով նկատի ունենք, որ ընտանիքը գիտակցում է, որ իր կարիքներն ավելին են, քան սնունդը, բնակարանը և այլն: Ուստի նրանք ունեն կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ նպատակներ՝ ապահովելու իրենց ընտանիքի ավելի մեծ ծավալի կարիքների բավարարումը:		
<u>Հիմնավորումը:</u> Եթե ընտանիքը չի տիրապետում իր կարիքներին, նրանք կարող չեն լինի կյանքից ստանալ ավելին և դուրս գալ իրենց կոմֆորտի տարածքից:		
Կանաչ: Իմ ընտանիքում մենք սովորաբար վերլուծում ենք մեր ներկա իրավիճակը և մտածում ենք, թե այն ինչպես է կարելի բարելավվել: Մենք մեր ապագայի վերաբերյալ ունենք կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ նպատակներ:	**Դեղին**: Իմ ընտանիքում մենք գիտենք ինչպիսի ապագա ենք ուզում, սակայն չգիտենք ինչպես հասնել դրան:	**Կարմիր**: Իմ ընտանիքում մենք չենք կարողանում պատկերացնել, թե ինչպես կարող ենք փոխել մեր իրավիճակը, մենք գիտենք, որ իրավիճակը կարող է այլ լինել, սակայն ինչպե՞ս:

Ցուցանիշ 51: **Ինքնավստահություն և ինքնագնահատական**	**Կատեգորիա:** **Հայեցակարգային ցուցանիշ**	**Չափում:** **Ինքնաճանաչում և մոտիվացիա**
<u>Սահմանումը:</u> Ընտանիքում կա փոխվստահության մթնոլորտ: Այն արտացոլվում է անդամների ներքին և արտաքին փոխհարաբերություններում, հասարակական կանոններում, անձնական չափորոշիչներում և այլն:		
<u>Հիմնավորումը:</u> Ընտանիքի համար ապագայում չկանխատեսված իրավիճակների հետ բախվելու տեսանկյունից շատ կարևոր է ինքնավստահությունը, որը թույլ կտա դուրս գալ հարմարավետության վիճակից:		
Կանաչ: Իմ ընտանիքի անդամների մեծ մասը կամ բոլորն ինքնավստահ են և ունեն բարձր ինքնագնահատական, որն արտացոլվում է տարբեր իրավիճակներում:	**Դեղին**: Իմ ընտանիքի որոշ անդամներ ունեն բավականին լավ ինքնագնահատական կամ ինքնավստահ են, սակայն հիմնական չեն սիրում դուրս գալ հարմարավետության միջավայրից:	**Կարմիր**: Իմ ընտանիքի անդամները կարծում են, որ դժվար է ինքնավստահ լինել և նրանք ունեն ցածր ինքնագնահատման, մենք չենք ներգրավվում այնպիսի գործընթացներում, որտեղ հարմարավետ չենք զգում:

Ցուցանիշ 52: **Հուզական գիտակցություն**	**Կատեգորիա:** **Առաջարկվող ցուցանիշ**	**Չափում:** **Ինքնաճանաչում և մոտիվացիա**
<u>Սահմանումը</u>: Հուզական գիտակցությունը, այլոց հետ հարաբերություններ հաստատելու, տարբեր հույզեր վերապարելու, այլոց հույզերը ճանաչելու, և հույզերն ու մտքերը միմյանց կապելու, հարաբերությունները մտքերի, խոսքերի և գործողությունների հետ կապակցելու կարողությունն է: Ընտանիքները գիտեն իրենց թույլ և ուժեղ կողմները և մոտիվացնում են իրենք իրենց ձեռքբերել թիրախային նպատակները:		
<u>Հիմնավորումը</u>: Շատ կարևոր է, որ անհատն ունակ լինի արտահայտել իր հույզերը, որպեսզի կարողանա երջանիկ ապրել: It is important that an individual is capable of expressing themselves and their emotions in order to live a happy life. Հույզերի ճնշումը կարող է հանգեցնել դեպրեսիայի և լարվածության:		
Կանաչ: Իմ ընտանիքի անդամները ճանաչում են իրենց և դիմացիների հույզերը: Նրանք կարողանում են կառավարել սեփական հուզական արձագանքները տարբեր իրավիճակներում և հասկանում են իրենց գործողությունների հնարավոր հետևանքներն իրենց և մյուսների համար:	**Դեղին**: Իմ ընտանիքի անդամները երբեմն ճանաչում են իրենց կամ դիմացիների հույզերը և կառավարում են իրենց արձագանքը: Սթրեսային իրավիճակներում կամ հիմնախնդրի հանդիպելիս նրանք կարող են թաքցնել իրենց հույզերը կամ իմպուլսիվ արձագանք տալ:	**Կարմիր**: Իմ ընտանիքի անդամները գործում են՝ չկանխատեսելով իրենց արարքների հնարավոր հետևանքները:

Ցուցանիշ 53: **Նախաձեռնողականություն**	**Կատեգորիա:** **Առաջարկվող ցուցանիշ**	**Չափում:** **ԻՆԻՆքնաճանաչում քնագիտակցում և մոտիվացիա**
<u>Սահմանումը:</u> Նախաձեռողական անհատը պրոակտիվ կերպով փորձում է գտնել լուծումներ կոնկրետ իրավիճակում: Անհատը սովորում է իր սխալներից և շարունակաբար՝ մեծ էնտուզիազմով, փորձում է հասնել իր նպատակներին: Սա վերաբերում է կյանքի տարբեր ասպեկտներին (սոցիալական, անձնական, աշխատանքային).		
<u>Հիմնավորումը:</u> Նախաձեռնողականությունը կարևոր որակ է: Այն թույլ է տալիս կյանքի նկատմամբ ունենալ պրոակտիվ մոտեցում՝ թույլ տալով անհատին պատասխանատու լինել սեփական կյանքի և որոշումների համար:		
Կանաչ: Իմ ընտանիքում, մենք նախաձեռնողական ենք, պրոակտիվ, և փորձում ենք լուծումներ գտնել մեր նպատակին հասնելու համար: Մենք փորձում ենք ստեղծագործական մոտեցում ցուցաբերել խնդիրների լուծման ժամանակ և հասնել հաջողության:	**Դեղին:** Մենք նախաձեռնողական ենք, սակայն երբեմն ճանապարհի կեսին կանգ ենք առնում:	**Կարմիր:** Իմ ընտանիքում մենք հիմնականում հարմարվում ենք առաջարկվող լուծումներին: Մենք սովորաբար հիմնախնդիրները լուծելու նախաձեռնությունը մեր ձեռքը չենք վերցնում, այլ անում ենք այն, ինչ ուրիշներն են որոշում:

Ցուցանիշ 54: **Ընտանեկան բռնություն10**	**Կատեգորիա:** **Առաջարկվող ցուցանիշ**	**Չափում:** **Ինքնաճանաչում և մոտիվացիա**
<u>Սահմանումը</u>: Ընտանեկան բռնությունը ներառում է ընտանիքի մեկ անդամի կողմից մյուսի նկատմամբ դրսևորած ագրեսիայի բոլոր ձևերը: Սրանց թվում են՝ ֆիզիկական (ֆիզիկական, սեռական բռնություն, մեկուսացում), հոգեբանական (հուզական բռնություն՝ նվաստացում, ծարում) կամ տնտեսական (աշխատանքի արգելանք, դրամի գողություն, սեփական գումարը տնօրինելուց զրկում)		
<u>Հիմնավորումը</u>: Ընտանիքի այլ անդամի նկատմամբ բռնությունը նրա հիմնարար իրավունքների ոտնահարում է և նշանակալի ազդեցություն ունի նրա կյանքի որակի և առողջության վրա:		
Կանաչ: Ֆիզիկական, սեռական, տնտեսական կամ հոգեբանկան բռնությունը մեր ընտանիքի համար խնդիր չեն:	**Դեղին**: Իմ ընտանիքում եղել են բռնություն պարունակող միջադեպեր, սակայն դրանք ստացել են համապատասխան արձագանք:	**Կարմիր**: Իմ ընտանիքում հանդիպում են բռնության դեպքեր և որևէ քայլ դրանց ուղղված չի ձեռնարկվում:

Ցուցանիշ 55: **Բարոյական գիտակցություն**	**Կատեգորիա:** **Առաջարկվող ցուցանիշ**	**Չափում:** **Ինքնաճանաչում և մոտիվացիա**
<u>Սահմանումը:</u> Այնպիսի որոշումներ կայացնելու կարողությունը, որի դեպքում հարգվում են անհատը, ընտանիքը և համայնքը, կոչվում է բարոյական գիտակցություն:		
<u>Հիմնավորումը:</u> Բարոյական գիտակցությունը կարևոր է նրանով, որ այն առաջնահերթ է համարում այնպիսի որոշումների կայացում, որտեղ հարգվում է լայն հանրությունը, ոչ թե մեկ անհատը:		
Կանաչ: Մեր ընտանիքում որոշումները կայացվում են՝ այլ մարդկանց, ընտանիքների և համայնքի իրավունքները հաշվի առնելով և հարգելով:	**Դեղին:** Մեր ընտանիքում որոշումները կայացվում են՝ ելնելով նրանից, թե ինչն է ընդունված մեր համայնքում:	**Կարմիր:** Մեր ընտանիքում կայացվում են զուտ մեր շահերից բխող որոշումներ: Մենք չենք մտածում, թե դրանք ինչ ազդեցություն կարող են թողնել այլոց վրա:

Ցուցանիշ 56: **Գիտելիքները և կարողությունները զարգացնելու ցանկություն**	**Կատեգորիա:** **Առաջարկվող ցուցանիշ**	**Չափում:** **Ինքնաճանաչում և մոտիվացիա**
Սահմանում: Ընտանիքի անդամները ցանկանում են զարգացնել իրենց կարողություններն ու գիտելիքները:		
Հիմնավորում: Կարևոր է առաջ գնալու ցանկություն ունենալը:		
Կանաչ: Մեր ընտանիքում մենք անընդհատ փորձում ենք գտնել մեր կարողությունները բարելավվելու ուղիներ:	**Դեղին:** Իմ ընտանիքում որոշ անդամներ հետաքրքրված են սեփական կարողությունների և գիտելիքների բարելավմամբ, սակայն հնարավոր տարբերակներն ակտիվորեն չեն փնտրում կամ մտածում են, որ դրանք իրենց հասանելի չեն:	**Կարմիր:** Մենք հետաքրքրված չենք նոր կարողություններ զարգացնելու և նոր գիտելիքներ ձեռքբերելու հնարավորություններով: